ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2015թ. թիվ 324-Ա

Դ.ԲԵԳԼԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109 հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետով և 130-րդ հոդվածի 2.1 ենթակետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով ՔԿԱԳ Վանաձորի տարածքային ստորաբաժանման կողմից 2015 թվականի հոկտեմբերի 26-ին տրված ԱԲ N 224249 մահվան վկայականը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Փամբակի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Դավիթ Բեգլարյանի հետ 2011 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված աշխատանքային պայմանագիրը համարել լուծված 2015 թվականի հոկտեմբերի 22-ից՝ նրա մահվան կապակցությամբ:

2. «ՀՀ Լոռու մարզի Փամբակի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. հոկտեմբերի 28
ք.Վանաձոր